



Կարգապահական գործ թիվ 17072

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի դեկտեմբերի 14-ի թիվ 205-րդ ԿԳ նիստի նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/128-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև
ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝
Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տարոն Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի
Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի,
Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի,
քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Լուսինե Սահակյանին (արտոնագիր՝ 999)
(այսուհետ նաև՝ Պատասխանող) կարգապահական պատասխանատվության
ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

18.07.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն
վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի
(այսուհետ նաև՝ **Դատարան կամ Դիմող**) դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական
սանկցիա կիրառելու մասին» 13.07.2017թ. որոշումը (այսուհետ՝ **Որոշում կամ Դատական
սանկցիա**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ **ԵԷԴ/0050/01/17
քրեական գործով 2017թ. հուլիսի 13-ի հերթական դատական նիստում** պաշտպան
Լուսինե Սահակյանը Դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք,
որը պայմանավորված է եղել նրանով, որ վերջինս առանց նախագահողի թույլտվության
կատարել է անզուսպ հայտարարություններ, բարձրաձայն ծիծաղել է, որի
կապակցությամբ Դատարանի կողմից կիրառվել է դատական սանկցիա, սակայն,
պաշտպանն՝ անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել
նույնանման վարքագիծ՝ այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել
դատական նիստի բնականոն ընթացքը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 14.08.2017 թիվ 238-Ա/ԿԳ-17072 որոշման հիման վրա փաստաբան Լուսինե Սահակյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, սակայն տրամադրել է դատական նիստի արձանագրության ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Լուսինե Սահակյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, սակայն Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Նախապատրաստողը կազմել է եզրակացություն 14.10.2017թ.:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 17.10.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 14.12.2017թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի

3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս: Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.*

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 13-ի հերթական դատական նիստում Պատասխանող Լուսինե Սահակյանը ցանկացել է միջնորդություն ներկայացնել, սակայն դատավոր Ա. Գաբրիելյանը հայտնել է, որ Լուսինե Սահակյանին ձայն չի տալիս: Պատասխանող Լուսինե Սահակյանը խնդրել է հայտնել թե քրեական դատավարության, որ նորմով է դատարանը ղեկավարվում իրեն արգելով, որին ի պատասխան դատավորը հայտնել է, որ դատավորն է սահմանում դատարանում կարգը, իսկ Լուսինե Սահակյանը հայտնել է, որ դատարանը կարգը սահմանում է ղեկավարվելով քրեական դատավարության օրենսգրքով և դատարվորը չի կարող օրենսգիրքը ծալել դնել մի կողմ: Դատարանը նախազգուշացում է կիրառել Լուսինե Սահակյանի նկատմամբ, որին հաջորդել է Լուսինե Սահակյանի հայտարարությունը, որ ինքը միջնորդություն է ցանկանում ներկայացնել և առարկում է դատավորի գործողությունների դեմ: Սակայն դատարանը հայտարարել է, որ հեռանում է խորհրդակցական սենյակ Լուսինե Սահակյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու համար:

Նշված հանգամանքը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ (4 08 2017_07_13 12-32-39, ըստ 4:10-6:05), դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար Գևորգ Գևորգյան կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Լուսինե Սահակյանը փաստաբան է հանդիսանում 12.11.1996թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 12 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից մեկն ավարտվել է, իսկ 11-ն ընթացքի մեջ են: Ավարտված վարույթով Պատասխանող Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տույժ՝ նկատողություն և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին մասնակցություն լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով: Խորհրդի համապատասխան որոշումն ուժի մեջ չի մտել, քանի որ Պատասխանողի կողմից բողոքարկվել է դատական կարգով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պարասխանարկության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ **ՔԴՕ**) 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պարզաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի... որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կիրառել հետևյալ սանկցիաները ... 4) պարասխանարկության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապարասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է՝ ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին:

Միևնույն ժամանակ ՔԴՕ-ի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ պաշտպանը... իրավունք ունի հարուցել միջնորդություններ:

ՔԴՕ-ի 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո...:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ միջնորդության և պահանջի վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պարճառաբանված:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Միևնույն ժամանակ փաստաբանը նպաստում է արդարադատության իրականացմանը և այդ առաքելության շրջանակներում կոչված է ծառայել արդարադատության շահերին: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները:

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով հստակորեն սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կանոնագրքի 4.1 կետին, որը, լինելով բլանկետային իրավադրույթ, հղում է կատարում դատարաններում գործող վարվելակերպի կանոններին: Վերջիններս նախատեսված են ՔԴՕ-ում և, մասնավորապես, դրա վերոնշյալ դրույթներում: Ըստ այդմ, փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատական նիստը նախագահողի **օրինական կարգադրություններին**: Նշվածից նաև հետևում է, որ փաստաբանի պարտականությունը ենթարկվել դատավորի կարգադրություններին գործում է միայն դրանց օրինական և իրավաչափ լինելու դեպքում: Դատավորի կարգադրությունները կարող են համարվել օրինական, եթե դրանք հիմնված են օրենքի համապատասխան դրույթի վրա, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով*: Սրանից հետևում է նաև, որ ՔԴՕ-ի 314.1-րդ հոդվածի վերոնշյալ իրավադրույթը դատարանի օրինական կարգադրություններին փաստաբանի ենթարկվելու պարտականության մասին չի կարող մեկնաբանվել որպես դատարանի կողմից փաստաբանի իրավունքների անհարկի սահմանափակման հիմք:

Ավելին՝ Կանոնագրքի 4.1 կետը պարտավորեցնում է փաստաբանին դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելով հանդերձ՝ իր վստահորդի շահերը պաշտպանել անկաշկանդ և անվախ՝ մնալով օրենքի և իրավունքի դաշտում, սակայն միևնույն ժամանակ առավելագույնս օգտագործելով իր դատավարական իրավունքները և օրենքով չարգելված բոլոր միջոցներն իր վստահորդի շահերի ներկայացումն ու պաշտպանությունն իրականացնելու համար: Մասնավորապես, փաստաբանի՝ միջնորդություն հարուցելու իրավունքը նրա հիմնական դատավարական իրավունքներից է, որը նախատեսված է ՔԴՕ-ի 73-րդ հոդվածով, և դրան համապատասխան՝ ՔԴՕ-ի 102-րդ հոդվածով նախատեսված է քրեական վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում նաև դատարանի պարտականությունը քննության առնել փաստաբանի միջնորդությունը և կայացնել այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ պատճառաբանված որոշում:

Սույն պարագայում դատավորը թույլ չի տվել Պատասխանողին ներկայացնել իր միջնորդությունը՝ առանց որևէ հիմնավորման սահմանափակելով Պատասխանողի հիմնական դատավարական իրավունքներից մեկը: Ավելին՝ դատավորը հայտարարել է, որ արգելում է Պատասխանողին միջնորդություն ներկայացնել և խոսել: Դատավորի սույն գործողությունները չունեն որևէ իրավական հիմք, ուստի՝ չեն կարող համարվել փաստաբանին ուղղված՝ դատարանի օրինական կարգադրություն: Բացի այդ, առարկելով դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ՝ Պատասխանողը թույլ չի տվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, և դատավորի գործողությունների նկատմամբ նրա քննադատությունը դուրս չի եկել մրցակցային դատավարության ընթացքում Օրենքով, ՔԴՕ-ով և Կանոնագրով նախատեսված իրավունքների շրջանակից:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի գործողություններում առկա չէ Կանոնագրի 4.1 կետի պահանջների խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 14.08.2017 թիվ 238-Ա/ԿԳ-17072 որոշմամբ փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 999) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Տարոն Վարդանի Սիմոնյան

**14 դեկտեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/128-Ա
ք. Երևան**